



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 10 ՄԱՐՏ, 2025

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս քու. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ

*Նայեաց սիրով, Հայրդ գթած, Ի քո ստեղծեալ գործս ձեռաց.  
Եւ գբանակս հրեշտակաց, Տուր պահապան մեզ տկարացս,  
Փրկեա զանձիսս ի փորձանաց, Ի խաւարի շրջող դիւաց.  
Չի ի տուրնջեան և գիշերի, Տացուք քեզ փառս անլռելի:*

### ԱՂՈՐՔ

Տէր Աստուած գթութեան, մեր հոգիներէն փարատ մշուշոտ եւ խաւարային խորհուրդները: Բանսարկուին թելադրած պատրանքներէն հեռու պահէ մեզ, եւ շնորհէ՝ որ հաւատով ապաւինինք ամենասուրբ Երրորդութեանդ՝ Հօրը, Որդիին ու Սուրբ Հոգիին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հօգօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X 3)*

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Աստուածամին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

*Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:*

*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:*

*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:*

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

Հաւարով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, անեղ եւ անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց:

Հաւարով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն

եւ մի աստուածութիւն, արարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի. հալածեա՛ր ի հոգոյ իմնէ զխաւար մեղաց եւ անգիտութեան, եւ լուսաւորեա՛ր զմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս, եւ ընդունել ի քէն զխնդրուածս իմ. եւ ողորմեա՛ր քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

## ՍԱՂՄՈՍ 78

### ԱՍՏՈՒԱԾ ԻՆՉՊԷՍ ԱՌԱՋՆՈՐԴԵՑ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԻԸ

**Ա**նհնազանդ եւ ապստամբ չըլլան իրենց նախահայրերուն նման.  
այն սերունդին՝ որ Աստուծոյ չվստահեցաւ, եւ Աստուծոյ հաւատարիմ չեղաւ.  
ինչպէս Եփրեմի ցեղին պատկանողները,  
որոնք թէպէտ նետ ու աղեղով սպառագինուած էին,  
բայց պատերազմին օրը ձգեցին փախան,  
որովհետեւ Աստուծոյ հետ ուխտը չպահեցին,  
եւ մերժեցին անոր Օրէնքին համաձայն ապրիլ:  
Մոռցան իրենց համար Աստուծոյ ըրածները, անոր ցոյց տուած սքանչելի գործերը:  
Աստուած անոնց հայրերուն դիմաց հրաշքներ ըրաւ  
Եգիպտոսի մէջ, Տայանիսի դաշտին մէջ:  
Ծովը նեղեց եւ անոր մէջէն անցուց զանոնք,  
պատի մը պէս կանգնեցնելով ջուրերը:  
Զանոնք առաջնորդեց ցերեկը՝ ամպով, եւ գիշերն ամբողջ՝ կրակի լոյսով:  
Անապատին մէջ ժայռերը նեղեց  
եւ առատօրէն խմելիք ջուր տուաւ անոնց՝ երկրին խորերէն:  
Ժայռէն առուակներ բղխեցուց, եւ ջուրերը գետերու պէս հոսեցուց:  
Բայց անոնք շարունակեցին Աստուծոյ դէմ մեղանչել,  
եւ աւելի բարկացուցին Բարձրեալը՝ անջրդի վայրին մէջ:  
Գիտակցաբար զԱստուած փորձեցին՝ իրենց ցանկացած կերակուրները ուզելով:  
Աստուծոյ դէմ խօսեցան, եւ ըսին. –  
«Աստուած կրնա՞յ անապատին մէջ ուտելիք տալ:  
Ճիշդ է, որ ժայռին զարկաւ եւ ջուր բղխեցուց, յորդառատ վտակներ հոսեցան.  
բայց կրնա՞յ նաեւ հաց տալ, կամ միս հայթայթել իր ժողովուրդին»:  
Տէրը լսեց ու զայրացաւ, կրակի պէս բոցավառեցաւ իր ժողովուրդին դէմ,  
եւ բարկութեամբ բորբոքեցաւ անոնց վրայ, որովհետեւ Աստուծոյ չհաւատացին,  
եւ անոր փրկութեան չվստահեցան:  
Վերէն հրաման տուաւ ամպերուն, եւ երկինքին դռները բացաւ,  
եւ որպէս ուտելիք՝ երկինքէն մանանայ տեղացուց իր ժողովուրդին վրայ,  
երկնային հաց տուաւ անոնց:  
Մարդիկ հրեշտակներուն հացէն կերան, Աստուած զանոնք կերակուրով լիացուց:  
Երկինքէն արեւելեան հովը հանեց, իր զօրութեամբ հարաւային հովը բերաւ, եւ անոնց  
վրայ փռեց իր առատութեամբ միս տեղացուց,  
ծովուն աւազին պէս անհամար թռչուն տեղացուց:  
Զանոնք թափեց իր ժողովուրդին բանակավայրին մէջտեղը,  
անոնց վրաններուն շուրջը շրջապատը:  
Անոնք կերան առատօրէն, եւ լիացան, Աստուած իրենց ցանկացածը տուաւ:  
Բայց տակաւին յագեցուցած չէին իրենց ցանկութիւնը,  
ուտելիքը անոնց բերնին մէջ էր դեռ, երբ Աստուծոյ բարկութիւնը բորբոքեցաւ անոնց դէմ,  
եւ սպանեց անոնց ղեկավարները, կոտորեց Իսրայէլի ընտրանին:



**ՄԵԽԹԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ 78:9-31**

Զգուշացնել է յերոյ, թէ չըլլայ իրենց նախահայրերուն նման Ասպուծոյ չվարահին եւ Ասպուծոյ հաւաքարիմ չըլլան, օրինակ բերելով Եփրեմի ցեղը, հակառակ սպառազինուած ըլլալուն, չշարունակեցին պարերագմը: Մենք ալ յաճախ սպառազինուած Ասպուծոյ սպառազինութեամբ, բայց չենք ուզեր պարերագմը շարունակել մեղքին ու չարին դէմ: Որովհետեւ Ասպուծոյ հետ ուխտը չպահեցին եւ Օրէն-քին համաձայնը ապրիլը մերժեցին: Առաւել, մոռցան Ասպուծոյ ըրած սքանչելի գործերը: Հաշտութեան, հաւաքարմութեան եւ հնազանդութեան ուխտը: Ասպուծ օգրագործեց բնութեան փարրերը անով ցոյց փալու իր հոգածութիւնը հանդէպ իր ժողովուրդին: Այնպէս ինչպէս Քրիստոսի պարագային, երբ խաղաղեցուց ծովն ու փոթորիկը, աշակերտները պիտի ըսէին, թէ «ով այս մարդը, որ ծովն ու հովը իրեն կը հնազանդին»: Ասպուծ որպէս արարիչ, սրբազան կրնայ բնութեան փարրերը օգրագործել, անով ցոյց փալու իր մեծամեծ գործերը: Տակաւին, ամբողջ ժողովուրդ մը առաջնորդեց անապարին մէջ ցերեկը ամպի սիւնով, որպէսզի անապարի կիզող արեւը չվնասեր, իսկ գիշերը կրակի լոյսով, որպէսզի ճամբան լուսաւորէր: Ահա այսպիսի հրաշալիքներուն դիմաց, փակաւին ինչպէս կարելի է զԱսպուծ ուրանալ, Անոր հաւաքարիմ ու հնազանդ չըլլալ: Մինչեւ իսկ անապարին մէջ շուր բղիսեցուց առաքօրէն: Բայց անոնք շարունակեցին մեղանչել եւ աւելի բարկացուցին Բարձրեալը: ասպուծ որքան բարիքներով լիացուց, աւելի մեղքի փակ իյնկան: Ինչ որ իրենց սրտին մէջ կը ցանկային, սկսան շրթներով արտայայտուիլ, եւ այդ ձեւով զԱսպուծ փորձել. «Կրնա՛յ հաց եւ միս հայթայթել»: Յաճախ մենք ալ նոյն թակար-դը կ'իյնանք: Ասպուծ կը դարձնենք մեր ծառան ներկայացնելով Անոր ցանկը մը պահանջներու, խնդ-րանքի անունի փակ: Ինչ որ ըրին, գիտակցաբար ըրին: Անշնորհակալ ըլլալ: Այդ բոլորը ընել է իրենք քեանել է վայելել է յերոյ, սկսան հարցականի փակ առնել կրնա՛յ ընել: Կարծէք կ'ուզէին ըսել, ցոյց փուր ամենագորութիւնդ: Այնպէս չէ, որ Ասպուծ ալ անարբեր մնար իրենց այս արտայայտութեան դիմաց: Տէրը լսեց ու զայրացաւ եւ կրակի պէս կը բոցավառէ իր ժողովուրդին դէմ եւ իր բարկութիւնը կը յայտնէ: Նոյնը բարկութիւնը Քրիստոս կը յայտնէ երբ փաճար կը մտնէ ու ինչ քեանէ, փաճարը վերածուած վաճառաբան: Ուրեմն, Ասպուծ կը բարկանա՛յ: Այո: Այսօր ալ նոյն վիճակի մէջ է մարդկութիւնը, ի քեւ մարդկութեան չարութեան Ասպուծ անարբեր չէ, բայց եթէ չի միջամտեր, Պօղոս Առաքեալ կը ներ-կայացնէ Ասպուծոյ համբերաբարութիւնը որպէս փրկութեան առիթ: Եւ ի՞նչ է բարկութեան պարճառը, Ասպուծոյ չհաւաքալուն եւ փրկութեան չվարահելուն: Այսօր ալ մարդկութիւնը չի հաւաքար Ասպուծոյ, բայց այլ ուրիշ բանի կը հաւաքայ: Այդ այլ ուրիշ բանի հաւաքալը, կը նշանակէ այդ ուրիշ բանի երկրպագութիւն ընել, որուն համար ալ Ասպուծաշունչ մարտանը կը յիշեցնէ այն խօսքը, որ Ասպուծ նախանձոր Ասպուծ է, որ կը նշանակէ, նախանձախնդիր, եւ այդ նախանձախնդրութիւնը իր անունին եւ իր փառքին. «Ես իմ փառքս ուրիշին չեմ փար» Ելից 20:4-5: Քրիստոս առիթով մը պիտի ըսէ Նիկողի-մոսին. «Ասպուծ այնքան սիրեց աշխարհը ոչ մինչեւ իսկ իր միածին Որդին դրկեց աշխարհը, որպէսզի անոր հաւաքացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Ասպուծ իր Որդին դրկեց՝ ոչ թէ որպէսզի աշխարհը դաքապարտէ, այլ աշխարհը փրկէ: ով որ կը հաւաքայ անոր՝ չի դա-քապարտուիր. իսկ ով որ չի հաւաքար անոր՝ արդէն իսկ դաքապարտուած է, Ասպուծոյ միածին Որդիին չհաւաքալուն համար» Յովի 3:16-18: Ահա Ասպուծ երկինքէն մանանա քեղացուց հրեշտակներու ուրելիքը, ոչ թէ թագաւորներու ուրելիք: Որպէսզի գէթ քեանելով հաւաքային: Միս ուզեցին, միս ալ փուր: Անոնք կերան լիացան, բայց փակաւին յագեցուցած չէին իրենց ցանկութիւնը, ու փակաւին ուրել-լիքը իրենց բերնին մէջ, Ասպուծոյ բարկութիւնը բորբոքեցաւ եւ սպաննեց անոնց ղեկավարները:

**Պ**ահապան ամենայնի Քրիստոս,  
 աջ էո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
 եւ ողորմեա՛ էո արարածոց եւ ինձ բազմամեղիս: